ԿԱՐԾԻՔ

Ռոզա Աշոտի Աբրահամյանի՝ «Ազատազրկում պատժատեսակի կատարման տարբերակման և անհատականացման իրավական երաշխիքները» վերտառությամբ, ԺԲ.00.05 – «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Հանցագործության համար նշանակվող պատժի, այդ թվում՝ ազատազրկում պատժատեսակի կատարման հստակ տարբերակումը և անհատականացումը խիստ կարևոր թե՛ տեսական, թե՛ գործնական նշանակություն ունեն: Այդ առումով առանձնահատուկ կարևորվում է դրանց իրավական երաշխիքների պատշաճ կենսագործումը: Մինչդեռ մասնագիտական գրականության և իրավակիրառ գործունեության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քրեակատարողական իրավունքի նշված սկզբունքների կապակցությամբ առկա են տարակարծիք մոտեցումներ և վիճելի բազմաթիվ հարցեր:

Միևնույն ժամանակ, ՀՀ քրեակատարողական նոր օրենսգրքի ուժի մեջ մտնելով պայմանավորված՝ ներկա ժամանակաշրջանում էական վերակառուցման են ենթարկվել ինչպես պատժի համակարգը, այնպես էլ առանձին պատժատեսակների, այդ թվում՝ ազատազրկման, կատարման օրենսդրական չափորոշիչներն ու ընթացակարգերը, քրեակատարողական հիմնարկների կառուցվածքը: Այդ համատեքստում տրամաբանական անհրաժեշտություն է առաջացել ուսումնասիրել, վերլուծել և գնահատել քննարկվող սկզբունքների կիրառման խնդիրներն ու առաջարկել դրանց լուծման առավել արդյունավետ հիմնական ուղղությունները:

Շարադրվածը վկայում է Ռ. Աբրահամյանի ընտրած թեմայի արդիականության և դրա շրջանակներում իրականացված բազմակողմանի ու համալիր հետազոտության հրատապության մասին:

Աշխատանքը կառուցված է տրամաբանական հաջորդականությամբ. այն բաղկացած է ներածությունից, երեք գլխից, որոնք ներառում են տասը պարագրաֆ, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից:

Ներածությունում հեղինակը հիմնավորել է ընտրված թեմայի արդիականությունն ու հրատապությունը, ներկայացրել ուսումնասիրության նպատակն ու խնդիրները, հետազոտության օբյեկտն ու առարկան, ատենախոսության թեմայի մշակվածության աստիճանը, հետազոտության մեթոդաբանական, տեսական և նորմատիվ հիմքերը, կատարված ուսումնասիրության արդյունքների տեսական և գործնական նշանակությունն ու ատենախոսության գիտական նորույթը:

Աջաջին գլխում՝ «Պատիժների կատարման տարբերակման և անհատականացման սկզբունքների իրավական երաշխիքների տեսագործնական հիմնահարցերը» վերտառությամբ, հեղինակն անդրադարձ է կատարել իրավական երաշխիքներին՝ որպես քրեակատարողական իրավունքի տեսության հիմնահարցի, իրավունքի տվյալ ճյուղի սկզբունքների հիմնահարցին իրավական կարգավորման կառուցակարգի հայեցակարգի համատեքստում, ինչպես նաև պատիժների կատարման տարբերակման և անհատականացման սկզբունքների իրավական երաշխիքների տեսագործնական հիմնահարցերի ուսումնասիրության արդիական ուղղություններին:

Հիմնվելով տվյալ գլխի շրջանակներում իրականացված ուսումնասիրության վրա՝ հեղինակը կատարել է մի շարք արժեքավոր եզրակացություններ և առաջարկներ: Դրանցից կարելի է առանձնացնել հատկապես հետևյալները.

- Երաշխիքների հիմնահարցը քրեակատարողական իրավունքի տեսության գրեթե չուսումնասիրված տեսագործնական հիմնահարցերից է, որն առավելապես դիտարկվում է նեղ իմաստով և մեծամասամբ վերաբերում է իրավակիրառ ոլորտին՝ անտեսելով իրավական կարգավորման կառուցակարգի այլ փուլերին բնորոշ երաշխիքները:
- Պատիժների կատարման տարբերակման և անհատականացման սկզբունքների կենսագործման խնդրի քննարկումն իրավունքի ընդհանուր տեսության մոտեցումների համատեքստում հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ դրանց կենսագործման իրավական երաշխիքները ներառում են նաև միջազգային իրավական համապատասխան չափանիշները: Մասնավորապես՝ իրավաբանական ճշգրտությունը և որոշակիությունը, քրեակատարողական իրավունքի սուբյեկտների, հատկապես՝ դատապարտյալների իրավական տեղեկացվածությունը և այլն:

– Պատիժների կատարման տարբերակման և անհատականացման սկզբունքների իրավական երաշխիք համարելով դատապարտյալների տեղեկացվածությունն այդ սկզբունքների կենսագործման հիմնական կառուցակարգերի վերաբերյալ՝ առաջարկվում է նման տեղեկացվածության ապահովման համար, ՀՀ քր. կատ. օր. համապատասխան հոդվածներում լրացումներ կատարելով, պատիժը տարբերակված և անհատականացված կառուցակարգերով կրելու դատապարտյալի սուբյեկտիվ իրավունքը ճանաչել նրա առանձին հիմնական իրավունք:

Երկրորդ գլխում՝ «Պատիժների կատարման տարբերակման և անհատականացման սկզբունքների հիմնահարցերը քրեակատարողական իրավունքի տեսության մեջ» վերտառությամբ, ներկայացվել են պատիժների կատարման տարբերակման և անհատականացման սկզբունքների ձևավորման, օրենսդրական ամրագրման գործընթացը և զարգացման տեսական ուղղությունները, ինչպես նաև պատիժների կատարման տարբերակման և անհատականացման քրեակատարողական սկզբունքների հասկացութային առանձնահատկությունները և հատկանիշները: Այս կապակցությամբ ևս հեղինակը կատարել է մի շարք հետաքրքրարժան եզրակացություններ և առաջարկներ, որոնցից կարելի է առանձնացնել հատկապես հետևյալները.

– Օրենսդրական բարեփոխումների, ինչպես նաև քննարկվող հիմնախնդիրների կապակցությամբ տեսականորեն չլուծված, վիճելի բազմաթիվ հիմնահարցերի պայմաններում հետազոտական աշխատանքի կարևոր ուղղություններ են համարվում պատիժների կատարման տարբերակման և անհատականացման սկզբունքների վերաբերյալ տարատեսակ մոտեցումների ուսումնասիրությունը և այդ հիքմով՝ խնդրո առարկա սկզբունքների նորմատիվ իրավական նոր բովանդակության տեսական գնահատականը:

– Պատիժների կատարման տարբերակման տեսական գնահատման հարցում առկա է երկու հիմնական տիպային մոտեցում. տարբերակումը՝ որպես քրեակատարողական քաղաքականության մեթոդ և՝ որպես քրեակատարողական իրավունքի (օրենսդրության) սկզբունք: Պատիժների կատարման տարբերակումը որպես քրեակատարողական քաղաքականության մեթոդ կամ սկզբունք դիտարկելու հայեցակարգային մոտեցումները չեն հակասում և բացառում

միմյանց, այլ ընդհակառակը՝ ենթադրում են իրար: Տարբերակման՝ որպես քրեակատարողական մեթոդի պահանջները ելակետային նշանակություն ունեն քրեակատարողական իրավական կարգավորման կառուցակարգի բոլոր փուլերում: Հետևաբար, պատիժների կատարման տարբերակումը որպես քրեակատարողական քաղաքականության մեթոդ՝ դրա մշակման և իրավաստեղծ կենսագործման արդյունքում վերածվում է քրեակատարողական իրավունքի սկզբունքի:

– Պատիժների կատարման անհատականացումը դատապարտյալների անհատական առանձնահատկությունների ուսումնասիրության, նրանց դասակարգման և դրանց արդյունքների հաշվառման միջոցով իրականացվող օրենքով կարգավորված, համակարգված անընդհատ գործունեություն է՝ ուղղված պատժի կատարման և կրման կարգի, կիրառվող քրեակատարողական ներգործության միջոցների փոփոխությանը, որը դրական և բացասական ներգործության միջոցների կիրառմամբ դատապարտյալների մոտ ձևավորելով իրավահպատակ վարքագծի շարժառիթներ նպաստում է նրանց վերասոցիալականացմանը և դրանով պատժի նպատակների իրականացմանը:

Երրորդ գլխում՝ «Ազատազրկում պատժատեսակի կատարման տարբերակման և անհատականացման իրավական երաշխիքների օրենսդրական բարեփոխումները և կենսագործման կառուցակարգերի հիմնախնդիրները» վերտառությամբ, հեղինակը քննարկել է վերոհիշյալ սկզբունքների օրենսդրական հասկացությունների գիտական և իրավաբանական ճշգրտությունը՝ որպես դրանց կենսագործման երաշխիք, այդ սկզբունքների կենսագործման նորմատիվ իրավական կառուցակարգերի շրջանակի վերաբերյալ ավանդական տեսագործնական մոտեցումները քրեակատարողական իրավունքում, ինչպես նաև ազատազրկում պատժատեսակի կատարման տարբերակման և անհատականացման սկզբունքների կենսագործման նորմատիվ առանձին կառուցակարգերին ու դրանց վերաբերող օրենսդրական բարեփոխումներին և համապատասխան երաշխիքների շրջանակին: Այդ կապակցությամբ հետաքրքրարժան են հեղինակի հետևյալ եզրակացություններն ու առաջարկները.

– Քրեակատարողական իրավունքում դեռ նախորդ դարում որպես ազատազրկում պատժատեսակի կատարման տարբերակման և անհատականացման

սկզբունքների կենսագործման ավանդական հիմնական երաշխիքներ են պատկերացվել. 1) դատապարտյալների դասակարգումը միասեռ խմբերի՝ հաշվի առնելով անձի հանրային վտանգավորության բնույթն ու աստիճանը, յուրաքանչյուր խմբի նկատմամբ պատժիչ ներգործության միջոցների կիրառման տարբերությունը, որոնց դրսևորման ձևերն են՝ առանձին խմբերին տարբեր տեսակի քրեակատարողական հիմնարկներում անջատ պահելը, յուրաքանչյուր տեսակի հիմնարկում ուղղիչ ներգործության տարբերակում՝ ըստ դատապարտյալների խմբերի տիպաբանական առանձնահատկությունների, 2) ազատազրկման դատապարտվածների հետ տարվող աշխատանքի նպատակամղվածությունը նրանց վերասոցիալականացմանը, վերասոցիալականացման աշխատանքի ձևերի և մեթոդների հիմնվածությունը դատապարտյալի անձի անհատական տվյալների և պատժի կրման ընթացքում նրա վարքագծի վրա, դատապարտյալների բաշխման, ընդունման և հաշվառման ընթացակարգերի, ինչպես նաև դատապարտյալի անձի՝ հատուկ ծրագրի վրա կառուցված ուսումնասիրության կառուցակարգերի առկայությունը և այլն:

– Պատիժների կատարման տարբերակման սկզբունքը՝ լինելով օրենսդրորեն ամրագրված, ունի կենսագործման օրենսդրական կոնկրետ ձևեր (լուծումներ), իսկ անհատականացման սկզբունքը՝ որպես ընդհանուր իրավական ղեկավար դրույթ, կենսագործվում է միայն գործնական մակարդակում՝ ներթափանցելով դատապարտյալի նկատմամբ անհատական մոտեցման հնարավորություն նախատեսող քրեակատարողական իրավունքի բազմաթիվ ինստիտուտների և նորմերի մեջ: Հետևաբար, պատժի կատարման անհատականացման կենսագործման երաշխիքների շրջանակը չի կարող սպառիչ պատկերացվել, որովհետև այդպիսին են քրեակատարողական օրենսդրության բոլոր այն ինստիտուտները և նորմերը, որոնք հիմնված են անհատականացման սկզբունքի վրա կամ ենթադրում են անհատական մոտեցում:

– Պատիժների կատարման տարբերակման սկզբունքի կենսագործման երաշխիք հանդիսացող դատապարտյալների դասակարգման չափանիշներ են՝ ա) հանցանքի հանրային վտանգավորության աստիճանը, բ) դատարանի դատավճռով նշանակված ազատազրկման ժամկետը, գ) հանցագործության ռե-

ցեդիվը, դ) դատապարտյալի չափահասությունը: Օրենքում տեղ գտած դատապարտյալների այլ դասակարգումները պայմանավորված են քրեակատարողական օրենսդրության այլ խնդիրներով ու սկզբունքներով, դատապարտյալների մի շարք հիմնական իրավունքներով:

– Ազատազրկման դատապարտված անձանց նկատմամբ կիրառվող կարգապահական ներգործության միջոցների իրավակարգավորումներն իրավաբանական տեսանկյունից ունեն առաջադիմական բնույթ, որովհետև նախատեսում են դատապարտյալի նկատմամբ կիրառվող խրախուսանքի և տույժի միջոցների ավելի մեծ շրջանակ, ներառյալ պատժի կրման պայմանների դրական և բացասական փոփոխություն, տույժի միջոցների կիրառման ավելի որոշակի կարգ:

Առանձին ուշադրության են արժանի նաև ատենախոսության մեջ տեղ գտած հավելվածները, որոնք ներառում են ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ դատապարտյալներին և ՔԿՀ-ի աշխատակիցներին առաջադրված հարցադրումներ, որոնք կարող են օգտագործվել նաև քննարկվող ոլորտն ուսումնասիրող այլ հետազոտողների կողմից:

Միևնույն ժամանակ, ատենախոսության վերաբերյալ առկա են որոշ նկատառումներ, որոնք ընդհանուր առմամբ հանգում են հետևյալին:

1. Աշխատանքի առաջին գլխի շրջանակներում քննարկելով քրեակատարողական իրավունքի սկզբունքների երաշխիքների հիմնահարցը իրավական կարգավորման կառուցակարգի հայեցակարգի համատեքստում՝ հեղինակը հանգում է եզրակացության, որ «... քրեակատարողական իրավունքի սկզբունքներին, մասնավորապես նաև պատիժների կատարման տարբերակմանն ու անհատականացմանը, բնութագրական են միջազգային իրավական երաշխիքներ» (էջեր 34-35): Մինչդեռ անհասկանալի է՝ ո՞րն է միջազգային իրավական այդ երաշխիքների դերն ու նշանակությունը, ինչպե՞ս կարող են դրանք անդրադառնալ ներպետական իրավակարգավորումների զարգացման և իրավակիրառ գործունեության կատարելագործման վրա: Նշված հարցերի պարզաբանումը, թերևս, առավել արժեքավոր կդարձներ նաև գիտական շրջանառության մեջ դնելու համար առաջարկվող և պաշտպանության ներկայացվող հիմնադրույթ 1-ը:

2. Վիճահարույց է թվում հեղինակի դիտարկումն այն մասին, որ պատժի կատարման տարբերակման և անհատականացման իրավական բովանդակության մասին տեղեկությանը դատապարտյալին ծանոթացնելու համար իրավական երաշխիքներ ստեղծելու առումով հնարավոր է երկու տարբերակ. 1) ՀՀ ՔԿՕ 10-րդ հոդվածի 1-ին մասը «պատժի կատարման կարգի և պայմանների» ձևակերպումից հետո կարելի է լրացնել «տարբերակման ու անհատականցման իրավական կառուցակարգերի» իրավական բանաձևով, 2) պատիժը տարբերակված և անհատականացված կառուցակարգերով կրելու դատապարտյալի սուբյեկտիվ իրավունքը ճանաչել առանձին հիմնական իրավունք և այդ մասով լրացում կատարել դատապարտյալի օրենքով ամրագրված հիմնական իրավունքների շրջանակում: Ընդ որում, ըստ հեղինակի, առավել հիմնավորված է դրանցից երկրորդը, որի դեպքում «... ստեղծվում են այդ սկզբունքների կենսագործման կառուցակարգերի դատապարտյալի կողմից իմացության ավելի իրական իրավական երաշխիքներ, որոնք իրենց հերթին կարող են ունենալ խթանող և խրախուսող նշանակություն ՔԿՀ-ում դատապարտյալի կողմից իրավահպատակական վարքագիծ որդեգրելու համար» (էջեր 46-47): Այդ իմաստով, նախ, անհասկանալի է, թե ինչու՞մ է դրսևորվելու նշված խթանող և խրախուսող նշանակությունը: Բացի դրանից՝ իսկ ինչու՞ այդ նպատակին հնարավոր չէ հասնել վերոհիշյալ տարբերակներից առաջինի կիրառմամբ՝ առանց դատապարտյալի սուբյեկտիվ այդ իրավունքը նրա առանձին հիմնական իրավունք ճանաչելու:

3. Ատենախոսության երրորդ գլխի շրջանակներում քննարկելով ազատազրկում պատժատեսակի կատարման տարբերակման սկզբունքի կենսագործման նորմատիվ կառուցակարգերի օրենսդրական բարեփոխումները և դրանց իրավական երաշխիքները՝ հեղինակը հանգում է հետևության, որ տվյալ սկզբունքի կենսագործման ուղղությամբ ՀՀ քրեակատարողական նոր օրենսգիրքը կիրառել է մի շարք իրավական գործիքակազմեր, և թվարկում է դրանք (էջեր 131-132): Ընդ որում, տվյալ հետևությունը նույն բովանդակությամբ արտացոլված է նաև պաշտպանության ներկայացվող հիմնադրույթ 7-ում: Այդ առումով անհասկանալի է, թե պարզապես օրենսդրական կարգավորումների արձանագրումը տեսագործնական ի՞նչ նշանակություն ունի, ինչպե՞ս այն կարող է նպաստել ազատազրկման ձևով նշանակվող պատժի կիրառման նպատակների իրականացմանը:

Այդուհանդերձ, ներկայացված նկատառումները, իմ կարծիքով, չեն նսեմացնում կատարված աշխատանքի ընդհանուր առմամբ դրական գնահատականը:

Ամփոփելով վերոգրյալը՝ հարկ է նշել, որ Ռոզա Աշոտի Աբրահամյանի «Ազատազրկում պատժատեսակի կատարման տարբերակման և անհատականացման իրավական երաշխիքները» վերտառությամբ ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում «Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգով» սահմանված պահանջներին, իսկ հեղինակն արժանի է ԺԲ.00.05 – «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի իր կողմից հայցվող գիտական աստիճանին:

Ատենախոսության սեղմագիրն արտացոլում է աշխատանքի հիմնական բովանդակությունը, իսկ հեղինակի հրապարակած գիտական հոդվածները՝ դրա հիմնական դրույթները:

Պաշտոնական ընդդիմախոս՝
Արդարադատության ակադեմիայի ռեկտոր,
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր **Ս.Առաքելյան**

Ս.Առաքելյանի ստորագրությունը հաստատում եմ՝

Արդարադատության ակադեմիայի
աշխատակազմի ղեկավար **Ռ.Շահինյան**

18.05.2026 թ.